ԴԵՈՆԹՈԼՈԳԻԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑ ԱՐՑԱԽԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

17.10.2016 10:50

Հոկտեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը և Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանն աշխատանքային այցով Արցախում էին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փաստաբանների պալատի հետ համագործակցության շրջանակներում նրանք վերապատրաստման դասընթաց են վարել «Դեոնթոլոգիա և մասնագիտական կարգավիճակ» առարկայից: Դասընթացին մասնակցել է արցախցի շուրջ 25 փաստաբան:

Փաստաբանները քննարկել են Փաստաբանի վարքագծի կանոնագրքին, փաստաբանի վարքագծի կանոններին և փաստաբանական էթիկայի սկզբունքներին առնչվող դրույթներ:

Դասընթացի մասնակիցները հարցեր են հնչեցրել վստահորդների հետ հարաբերությունների, միջփաստաբանական հարաբերությունների դատարանների և այլ մարմինների հետ աշխատանքի վերաբերյալ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })